

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջոցառումներ

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (այսուհետ՝ ՓԼ և ԱՖ) դեմ պայքարը Հայաստանում հիմնականում կարգավորվում է ՀՀ միջազգային պայմանագրերով, «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք), այլ օրենքներով, ինչպես նաև այլ իրավական ակտերով:

«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի» ՀՀ օրենքի նպատակն է փողերի լվացմանը և ահաբեկչության ֆինանսավորմանը հակազդելու իրավական կառուցակարգերի սահմանման միջոցով պաշտպանել քաղաքացիների իրավունքներն ու շահերը, պետության շահերը, ֆինանսական կազմակերպությունների իրավունքներն ու շահերը, ինչպես նաև ապահովել Հայաստանի Հանրապետության տնտեսական համակարգի կայունության համար անհրաժեշտ իրավական մեխանիզմների առկայությունը:

«Մելլաթ բանկ» ՓԲԸ- ն ծառայություններ մատուցելիս խստորեն հետևում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարին ուղղված ՀՀ իրավական ակտերի պահանջների իրականացմանը:

«Մելլաթ բանկ» ՓԲԸ-ի փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման քաղաքականության հիմնական նպատակներն են.

- 1) ՓԼ և ԱՖ հիմնական մեխանիզմների և միջոցների բացահայտում և վերլուծություն,
- 2) ՓԼ և ԱՖ դեմ պայքարի արդյունավետ համակարգի ներդրում,
- 3) ՓԼ և ԱՖ հնարավոր և առկա ռիսկերի բացահայտում և նվազեցում:

«Մելլաթ բանկ» ՓԲԸ- ի փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման քաղաքականության հիմնական նպատակների իրականացման համար Բանկի առջև դրված խնդիրներն են՝

- 1) բացառել Բանկի ներգրավումը հանցավոր ճանապարհով ստացված փողերի օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման գործընթացին կամ Բանկի միջոցով հանցավոր ճանապարհով ստացված փողերի օրինականացմանը և ահաբեկչության ֆինանսավորմանը,
- 2) ապահովել Բանկի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցների կողմից Օրենքով, Օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով, Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխանությունը և կատարումը,
- 3) Օրենքով նախատեսված տեղեկությունների ժամանակին և ամբողջական ներկայացումը Լիազոր մարմնին /ՀՀ կենտրոնական բանկ/,
- 4) հանցավոր ճանապարհով ստացված փողերի օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված հնարավոր և առկա ռիսկերի գնահատման արդյունավետ ընթացակարգերի կիրառում,

5) ՓԼ և ԱՖ դեմ պայքարի հիմնական սկզբունքների պահանջների իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացում:

«Մելլաթ բանկ» ՓԲԸ- ի փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման քաղաքականությամբ ամրագրված նպատակների իրագործման և խնդիրների իրականացման նպատակով Բանկում կիրառվող միջոցառումների հիմնական սկզբունքներն են՝

- 1) Ճանաչիր հաճախորդիդ,
- 2) Իրազեկություն ՓԼ և ԱՖ հնարավոր և առկա ռիսկերի վերաբերյալ,
- 3) Գործարքների և/կամ գործարար հարաբերությունների կասկածելիության որոշում,
- 4) Կասկածելի գործարար հարաբերությունների կամ գործարքների կասեցում, գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժում կամ դադարեցում և ահաբեկչության հետ կապված անձանց գույքի սառեցում,
- 5) Օտարերկրյա ֆինանսական հաստատությունների հետ թղթակցային կամ համանման այլ հարաբերությունների դեպքում ՓԼ և ԱՖ կանխարգելման ոլորտում գործողությունների իրականացում,
- 6) Առանց առերես շփման գործարքներին բնորոշ ՓԼ և ԱՖ ռիսկերի կառավարում,
- 7) Տեղեկացման ենթակա տեղեկությունների տրամադրում Լիազոր մարմնին,
- 8) ՓԼ և ԱՖ կանխարգելման ոլորտում իրավասու աշխատակիցների ուսուցում,
- 9) ՓԼ և ԱՖ կանխարգելման նկատմամբ իրականացվող հսկողություն: